Կարգապահական գործ թիվ 17190

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 182-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/136-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմենյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Էդուարդ Ասլանյանին (արտոնագիր՝ թիվ 499) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

03.11.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա. Փիլոսյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 24.10.2017թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/1089/02/14 քաղաքացիական գործով 24.10.2017թ. նշանակված դատական նիստին դիմումատու Նունե Հարությունյանի ներկայացուցիչ փաստաբան Էդուարդ Ասլանյանը, չնայած դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառված դատական սանկցիաներին՝ նախազգուշացումներին, Դատարանի նկատմամբ դրսևորել է ընդգծված անհարգալից վերաբերմունք՝ չենթարկվելով դատարանի օրինական կարգադրություններին, պարբերաբար ընդհատելով և թույլ չտալով դատարանին ուղղել հարցեր, չենթարկվելով դատարանի հորդորին դիրքորոշում հայտնել քննարկվող հարցի շուրջ՝ դատարանում հանդես գալով բարձր տոնով (բղավելով), դատարանի վերաբերյալ արտահայտվելով անպատշաճ:

Դատարանը գտել է, որ փաստաբան Էդուարդ Ասլանյանը դատավորի օրինական

կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու և նիստի կարգը պարբերաբար խախտող գործողություններ կատարելու միջոցով Դատարանի նկատմամբ դրսևորել է ընդգծված անհարգալից վերաբերմունք:

Դատարանը 24.10.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է *փաստաբան Էդուարդ Ասլանյանի (արտոնագիր՝ թիվ 499) նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմել փաստաբանական պալատ:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 01.12.2017թ. թիվ 469-Ա/ԿԳ-17190 որոշմամբ փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 05.12.2017թ. հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

05.02.2018թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում նշել է, որ 24.10.2018թ. Պատասխանողն իր վստահորդի հետ համատեղ, միաժամանակ, նույն նիստում ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն են ներկայացրել նախագահող դատավորին: Պատասխանողը գտնում է, որ իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած որոշումը հիմնավոր ու պատճառաբանված չէ: Ավելին՝ նշված որոշման բովանդակության մեջ ներառված հիմքերը մտացածին են:

22.05.2018թ. Պալատում մուտք է եղել Պատասխանողի միջնորդությունը՝ իր կարգապահական գործով Խորհրդի նիստը հետաձգելու մասին՝ ներկայացուցիչ ներգրավելու անհրաժեշտության հիմքով, որը Խորհրդի կողմից բավարարվել է:

31.05.2018թ. Պալատում մուտք է եղել Պատասխանողի միջնորդությունը Նախապատրաստողին բացարկ հայտնելու վերաբերյալ, որը Խորհուրդը չի քննարկել՝ նման իրավասություն չունենալու հիմքով:

10.07.2018թ. Պալատում մուտք է եղել Պատասխանողի միջնորդությունը՝ իր կարգապահական գործով Խորհրդի նիստը հետաձգելու մասին՝ հիվանդ լինելու հիմքով, որը Խորհրդի կողմից մերժվել է:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 05.02.2018թ. կազմել է եզրակացություն, որում, մասնավորապես հայտնվել է հետևյալը:

24.10.2017թ. դատական նիստի ժամանակ Պատասխանողը խնդրել է ներկայացնել գործի նյութերը ծանոթանալու համար, որից հետո հանդես է եկել հայտարարությամբ՝ նախագահող դատըավորին ասելով հետևյալը. « Տարիքս հարգե՛ք գոնե, ձեռք մի՛ առեք, հերի՛ք եղավ, հարգելի՛ նախագահ հետո ի՞նչ, կլիենտին լարում եք փաստաբանի դեմ, որ ի՞նչ: Ասում եմ, թողե՛ք, ունեմ միջնորդություն… վերաբերում է Ձեր սխալ քայլերին…», որից հետո դատաքննության անցնելու պահանջ է ներկայացրել դատարանին, որին միացել է նաև Պատասխանողի վստահորդը: Դրանից հետո կրկին բանավեճ է սկսվել Պատասխանողի, վերջինիս վստահորդ Նունե Հարությունյանի և նիստը նախագահող դատավորի միջև, որի ընթացքում դատավորը Պատասխանողին հորդորել է լռել, նստել և նրան նախազգուշացրել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և դատարանի օրինական կարգադրություններին չենթարկվելու համար:

Անցնելով դատաքննությանը՝ դատարանը սահմանել է ապացույցների հետազոտման կարգը, իսկ Պատասխանողը շարունակել է ներկայացնել իր հայտարարություններն ու առարկությունները, որից հետո դատական նիստը նախագահող դատավորը հայտարարել է, որ տվյալ պահին քննարկման առարկա է դարձնում Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Պալատին դիմելու հարցը, ապա կողմին առաջարկել է այդ հարցի վերաբերյալ կարծիք հայտնել, որից հետո, հայտարարելով, որ ներկայացուցչի հայտարարությունները չեն վերաբերում սանկցիայի խնդրին, դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ՝ սանկցիայի խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու:

Նույն նիստում նախագահող դատավորի կողմից հրապարակվել է Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը՝ վերջինիս պատասխանատվության ենթարկելու դիմումով Պալատին դիմելու վերաբերյալ:

Կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին 07.02.2018թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 12.07.2018թ. ժամը 19:15-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Թիվ ԵԱԴԴ/1089/02/14 քաղաքացիական գործով դիմումատու Նունե Հարությունյանի ներկայացուցիչը փաստաբան Էդուարդ Ասլանյանն է:

- Թիվ ԵԱԴԴ/1089/02/14 քաղաքացիական գործով 24.10.2017թ. նշանակված դատական նիստում Էդուրդ Ասլանյանը պարբերաբար ընդհատել է նախագահողի դատավորին, խոսել է անհամաչափ բարձր տոնայնությամբ, չի ենթարկվել դատավորի օրինական կարգադրություններին, այն է՝ Դատարանին դիմելիս ոտքի կանգնել, չընդհատել իր հարցադրումները դիմումատու Նունե Հարությունյանին, դատաքննության ժամանակ քննարկվելիք պնդումները նախնական դատական նիստում չանել, դատական նիստին չաղմկել, Դատարանին չընդհատել և այլն, ոչ քաղաքավարի է խոսել Դատարանի հետ՝ մասնավորապես, Դատարանից պահանջելով իրեն ձեռք չառնել, հարգել իր տարիքը, նախագահող դատավորին առանձին դեպքերում դիմել է «դու»-ով և այլն:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Որոշմամբ, թիվ ԵԱԴԴ/1089/02/14 քաղաքացիական գործով 24.10.2017թ.տեղի ունեցած դատական նիստի արձանագրությամբ:

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Էդուարդ Ասլանյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (2 ավարտված վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական գործը:

Խորհրդի 05.04.2016թ. թիվ ԿԳ/67 որոշմամբ Էդուարդ Ասլանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 ենթակետերի խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է տույժ՝ նկատողություն: Տույժը մարված է:

Խորհրդի 06.10.2016թ. թիվ ԿԳ/110-Ա որոշմամբ Էդուարդ Ասլանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար: Նրա նկատմամբ կիրառվել է տույժ՝ խիստ նկատողություն: Տույժը մարված է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Էդուարդ Ասլանյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար,՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1. կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Վերոնշյալ կանոնի վերլուծությամբ փաստվում է, որ փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատավարական կանոններին՝ ներառյալ հարգանքով վերաբերվել դատարանին և դատավարության մյուս մասնակիցներին: Միևնույն ժամանակ փաստաբանի սույն պարտականությունը որևէ կերպ չպետք է կաշկանդի փաստաբանին իր վստահորդի շահերն անվախ պաշտպանելու հարցում՝ ընդհուպ մինչև հաշվի չառնելով սեփական շահերը կամ իր նկատմամբ ցանկացած հետևանք, որը կարող է ծագել նաև դատավորի գործողությունների հետևանքով: Այսինքն՝ փաստաբանը, դատարանում ներկայացնելով իր վստահորդի շահերը, պարտավոր է ապահովել ողջամիտ հավասարակշռություն իր մասնագիտական պարտականությունները ջանասիրաբար և բարեխղճորեն կատարելու և դատարանի ու դատավարության մասնակիցների նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտականությունների միջև: Ընդ որում, փաստաբանի սույն պարտականությունները տարածվում նրա թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի (կազմված դատավարական և այլ փաստաթղթերի) վրա:

Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնագրքի 4.1-4.3 կետերի համաձայն՝

4.1 *փաստաբանը դատարանում… պարտավոր է ենթարկվել դատարանում… գործող վարքագծի կանոններին.*

4.2 փաստաբանը պարտավոր է պատշաճ հարգանքով վերաբերվել արդար դատաքննության ընթացակարգի նկատմամբ.

4.3 փաստաբանը պարտավոր է հարգալից և քաղաքավարի վերաբերվել դատարանի

նկատմամբ, իր վստահորդի շահերը պաշտպանել պատվարժանորեն և անվախ՝ հաշվի չառնելով սեփական շահերը կամ այն հետևանքները, որոնք կառաջանան իր կամ այլ անձի համար:

Կանոնագրքով սահմանված՝ դատարանում փաստաբանի վարքագծի կանոնները համահունչ են Եվրոպայում գործող չափանիշներին, ինչը վկայում է այն մասին, որ փաստաբանի կարգավիճակի անձնական-մասնագիտական և հասարակական բաղադրիչների ողջամիտ հավասարակշռման պահանջը բխում է միջազգային լավագույն փորձից:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ դատավորի օրինական կարգադրությունները չկատարելը, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելը կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելը: Սույն պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ՔԴՕ**) 115-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից՝ նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՔԴՕ-ով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Սույն պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանող Էդուարդ Ասլանյանը թիվ ԵԱԴԴ/1089/02/14 քաղաքացիական գործով 24.10.2017թ. նշանակված դատական նիստում պարբերաբար ընդհատել է նախագահողի դատավորին, խոսել է անհամաչափ բարձր տոնայնությամբ, չի ենթարկվել դատավորի օրինական կարգադրություններին, այն է՝ չընդհատել իր հարցադրումները դիմումատու Նունե Հարությունյանին, դատաքննության ժամանակ քննարկվելիք պնդումները նախնական դատական նիստում չանել, դատական նիստին չաղմկել, Դատարանին չընդհատել և այլն, ոչ քաղաքավարի է խոսել Դատարանի հետ՝ մասնավորապես, Դատարանից պահանջելով իրեն ձեռք չառնել, հարգել իր տարիքը, նախագահող դատավորին առանձին դեպքերում դիմել է «դու»-ով և այլն:

Վերոնշյալի հաշվառմամբ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը նման վարքագծով անհարգալից վերաբերմունք է դրսևորել Դատարանի նկատմամբ՝ խախտելով Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Խորհուրդը, հաշվի առնելով Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ պետք է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Պալատի Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Էդուարդ Ասլանյանին (արտոնագիր՝ թիվ 499) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 499) կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

12 հուլիսի 2018թ.
թիվ ԿԳ/136-Ա
ք. Երևան